ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն
Տ. Տ. ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),
Այլեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն
ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ին (Այլեքսանդրիա),
Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
Աբունա ԿՅՈՒՐԵՂ Զ-ին (Այլեքսանդրիա),
Երուսաղեմի Հունաց Պատրիարք Նորին Սրբություն
ԹԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),
Այլեքսանդրիայի և Երուսաղեմի Պատրիարք Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄՈՍ Գ-ին (Կահիրե),
Անտիոքի և Համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն
ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ին (Դամասկոս),
Սիրիական Օրթոդոքս Եկեղեցու և Համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն **ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Բ-ին** (Դամասկոս),
Համայն Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադդիս-Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Նորին Սրբություն **ՏԻՄՈԹԵՈՍԻՆ** (Կերալա),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն
ԵՓՐԵՄ Բ-ին (Թբիլիսի),

Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԿԻՐԻԼԻՆ (Սոֆիա),
Լիբանանի Մարոնիտ Պատրիարք Նորին Սրբություն
ՊՈԼ-ՊԻԵՌ ՄԵՈՒՇԻԻՆ (Բեյրութ),
Քենտրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
Միտրոպոլիտ Նորին Սրբություն դոկտ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ
(Լոնդոն),
Աթենքի և Համայն Հելլադայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Աթենք),
Սերբիայի և Համայն Հարավսլավիայի Պատրիարք Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ՊԱԹԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
Կիպրոսի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն
ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),
Նորին Ամենապատվություն Կարդինալ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ (Վատիկան),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՎԻԼՅԱՄ ՎԻՍՍԵՐ 'Դ ՀՈՒՖՏԻՆ (Ժընև),
Արևմտյան Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու Առաջնորդ
ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖԻՆ (Նյու-Յորք),
Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒԲՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (Տալլին),
Չեխոսլովակյան Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
դոկտ. ՄԻՐՈՍԼԱՎ ՆՈՎԱԿԻՆ (Պրագա),
Միջին Արևելքի Հայ Ավետարանական Եկեղեցիների միության նախագահ
Վերապատվելի Հ. ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
Ֆրանչիսկյան միաբանության Կուստոդ
Հ. ԼԻՆՈՒՍ ԿՈՊՊԻԵԼԼԻԻՆ (Երուսաղեմ),
ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ
Գերարժանապատիվ Հայր ՌՈՒԲԵՆ ՄՅՈՒԼԼԵՐԻՆ (Նյու-Յորք),
Մոնակոյի Եպիսկոպոս Գերաշնորհ ՇԱՌԼ ՌՅՈՒՊԻՆ (Մոնակո),
Մխիթարյան ուխտի Աբբահայր Գերհարգելի Հայր
ՀՄԱՅԱԿ Վարդապետ ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի Աբբահայր Գերապայծառ Հայր
ՄԵՍՐՈՊ Վարդապետ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (Վիեննա):

*

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Մեր սիրտը լեցուն Փրկչի լուսափայլ հարության ուրախությամբ, Հայ Առաքելական Եկեղեցվո անունով կողջունենք Ձեզ և Ձեր մեծ Եկեղեցին, Մեր աղոթքը միացնելով Ձեր աղոթքներուն, որ Քրիստոսի հարության լույսը առատապես ճառագայթե աշխարհի վրա և բոլոր եկեղեցիներն ու ժողովուրդները գտնեն ճանապարհը ճշմարտության, արդարության և խաղաղության:

Ձերմապես կմաղթենք նաև, որ Տերը պարգևե Ձեզ լիակատար առողջություն և զորավիգ լինի Ձեզ, որպեսզի շարունակեք Ձեր սուրբ առաքելությունը՝ ի մխիթարություն մեր օրերու մարդկության:

Մնամք հարգալից սիրով Ձեր եղբայրը ի Քրիստոս՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*

Ի քրիստոս սիրով միացած, երբ մի անգամ ևս միասին տոնում ենք Նրա հաղթական հարությունը, ջերմորեն ողջունում ենք Ձերդ սիրելեցյալ Սրբությանը, բարեմաղթելով Ձեզ, Ձեր հոգևորականության և հավատացյալներին զատկական սուրբ օրհնություններ:

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ
Տիեզերական Պատրիարք Հունաց

ՍՏԱՄԲՈՒԼ

*

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Քրիստոսի հարության լուսավոր և ուրախալի տոնի առթիվ, քրիստոսավանդ սիրով ողջունում եմ Ձերդ Սրբության եղբայրական ողջագուրմամբ ու բերկրանքով սրտագինս մաղթում, որ հարուցյալ Աստվածը միշտ Իր հովանին տարածի մեր եղբայրական սիրո ու համագործակցության վրա և օրհնի այն գործը, որին կոչված ենք ծառայելու Իր հրամանով:

Հայցելով Ձեր սուրբ աղոթքները, մնամ Ձերդ Սրբության նվիրված ի Քրիստոս,

ԱԼԵՔՍԻ
Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

ՄՈՍԿՎԱ

*

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

«Արդարև, յարեաւ Տէրն ի մեռելոց»:

Փրկչի հարության ավետիսը լցնում է մեր սրտերը բերկրանքով, սիրով և հավատով:

Աստուծո մասնավոր արտոնության շնորհիվ, մենք ծառայում ենք Նրան այն սրբազան վայրերում, ուր Նա պատարագվեց մեր փրկության համար, և տոնում ենք Զատիկը հազարավոր բարեպաշտ ուխտավորների հետ, որոնք Ավագ շաբթվա մեջ լցրել են Երուսաղեմ սուրբ քաղաքը:

Ս. Հարության Տաճարից մեր խոնարհ աղոթքներն ենք վերառաքում աշխարհի խաղաղության, քրիստոնեական եկեղեցիների համագործակցության և բոլորի միության համար:

Թող հարուցյալ Փրկիչը օրհնի մեզ բոլորիս Իր հարության շնորհներով և զորացնի Իր Եկեղեցու Գլուխներին՝ գործելու Իր փառքի համար:

Ջերմորեն փոխադարձում ենք Ձեր զատկական շնորհավորանքները և մնում ենք լավագույն բարեմաղթություններով Ձեր եղբայրն ի Քրիստոս,

ԲԵՆԵՏԻԿՏՈՍ
Հույն Օրթոդոքս Պատրիարք Երուսաղեմի

ԵՐՈՒՍԱՂԵՄ

*

Օրհնյալ լինի Աստված, Հայրը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի և Հայրը ամենայն մխիթարությանց, որը մեզ բերեց ուրախությունը Ձերդ Սրբությունից նամակ ստանալու: Եվ այս նամակը հասնում է մեզ Զատկական տոների առթիվ, բերելով մեզ այն բարեմաղթությունները, որ անում է Ձերդ Սրբությունը, որպեսզի Քրիստոսի հարության լույսը փայլի աշխարհի և եկեղեցիների վրա, որպեսզի մարդիկ գտնեն ճշմարտությունը, արդարությունն ու խաղաղությունը:

Այս փաստաթուղթը, իր ազնիվ կեցվածքով և՝ իր արտահայտած զգացմունքների վեհությամբ, մեզ համար պատմական դեպք է, նշանակելով շփման սկզբնավորությունը—կամ վերսկսումը—մեր երկու եկեղեցիների միջև: Ճշմարիտ է, որ մենք բարեկամական փոխհարաբերություններ ենք պահպանում Կիլիկիայի հայոց Կաթողիկոսության և Երուսաղեմի հայոց Պատրիարքության հետ, բայց սա առաջին անգամն է, երբ Ամենայն Հայոց Գերագույն Կաթողիկոսը թղթակցության մեջ է մտնում մեզ հետ: Սա վստահաբար էկու-

մենիկ սքանչելի շարժման հետևանքն է, մեր ժամանակներում երևան եկած Ս. Հոգու կողմից, վերջապես մերձեցնելու համար բաժանյալ քրիստոնյաներին: Սիրո այս փոխադարձ բացումը մի պարգև է, որ, շնորհիվն Աստուծո, կաճի և ի վերջո մեզ բոլորիս կամբողջացնի Միության մեջ, ի՛նչպես, ե՛րբ և ի՛նչ միջոցներով որ Աստված այդ կկամենա:

Աղոթում ենք մեղքին և մահվան հաղթահարող Տիրոջ, որպեսզի Ձերդ Սրբության, Ձեր նվիրապետության, Ձեր հոգևորականության և Ձեր քաջ հավատացյալների սրտերը լցնի ուրախության, լույսի և ուժի շնորհներով, որոնք բխում են Փրկչի փառապսանծ Ս. Գերեզմանից:

Սիրալիր հարգանքներով և եղբայրական սիրով, ի Քրիստոս նվիրյալ Ձեր եղբայրը,

ՄԱՔՍԻՄՈՍ Գ

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի,
Աղեքսանդրիայի և Երուսաղեմի,
Կարդինալ Ս. Եկեղեցու

ԿԱՀԻՐԵ

*

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Այս ուրախ առիթով, որը թանկ է յուրաքանչյուր քրիստոնյայի սրտին, ողջունում և շնորհավորում ենք Ձերդ Ս. Օծության, անկեղծորեն մաղթելով Ձեզ արևշատություն, Ձեր Եկեղեցու հոգևոր դասուն և աստվածասպաշտ հայ ժողովրդին խաղաղություն, բարօրություն:

Եղբայրական սիրով ի հարուցյալ Քրիստոս,

ԹԷՈԴՈՍԻՈՍ Զ

ԴԱՄԱՍԿՈՍ **Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի**

*

Սրտանց ողջունում և շնորհավորում ենք Ձերդ Սրբության մեծ տոնի առթիվ, երբ Փրկիչը հարյալ ի մեռելոց, հաղթեց մահվան և Իր իշխանությունը սփռեց համայն մարդկության վրա: Մեր Փրկչի հարության շնորհներով, ազատվեցինք սատանայի և մեղքի լծից և որդեգրվեցինք Նրա աստվածային թագավորության մեջ: Քրիստոսի Հարության տոնը հիշեցնում է մեր վերջնական փրկությունը, երբ Նրա երկրորդ գալստյամբ բոլոր հավատացյալները ժառանգելու են երկնային թագավորության փառքը, անվախճան ուրախությամբ:

Ձերդ ի Քրիստոս,

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ

ԴԱՄԱՍԿՈՍ **Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի**

*

Մենք և մեր Եկեղեցու Ս. Սինոդը սիրով ողջունում և շնորհավորում ենք Ձեզ Քրիստոսի սուրբ հարության տոնի առթիվ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Աղոթում ենք առ Աստված, որ զորանաև Ձեր հոգեկան և մարմնական ուժերը, որպեսզի կարողանաք շարունակել Ձեր բազմաբեղուն գործունեությունը Հայ Եկեղեցու պայծառության և հոգիների շինության համար:

«Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Հանձնելով Մեզ և մեր հավատացյալ հոտը Ձերդ Սրբության աղոթքներին, մնում ենք հարգանքոք, ջերմագին սիրով և աստվածային ողորմությամբ եղբայր ի Քրիստոս,

ԵՓՐԵՄ Բ

ԹԲԻԼԻՍԻ **Պատրիարք-Կաթողիկոս համայն Վրաստանի**

*

«Արդարև Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Ալէլուիա»:

Քրիստոնյաների այս հաղթական ավետիսը արձագանքում է դարերի միջով: Այս տարի Արևելքի և Արևմուտքի եկեղեցիները միասին են տոնում Զատիկը, և ուրախալի այս դեպքը սրտագին է հնչում, քանի որ բոլորս հաւատեղ ենք աղոթում Տիրոջ:

Մենք բոլորս, կաթոլիկ և առաքելական եկեղեցիներս, առաքելությամբ, որպես կենդանի խորհրդանշան մեր Փրկչի մահվան և հարության, պատկանում ենք Քրիստոսին:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց, առաջին պտուղն ննջեցելոց»:

Ս. Պողոս առաքյալի այս խոսքերը կագմում են Զատկվա օրվա անգլիական պատարագի մասը և գեղեցկորեն բացատրում, թե ինչո՞ւ եկեղեցական սովորույթը մեծարում է այսօրն ավելի քան մյուս օրերը: Քրիստոս հաղթեց մահվան և Նա երբեք չի կարող մահանալ նորից: Նրա հարությունը գրավականն է մեր անձնական հարության:

Թո՛ղ ամենակարողն Աստված օրհնի Ձեզ, սիրելի՛ Եղբայր, և թո՛ղ Ձեր բոլոր հոգևորականները և հավատացյալ ժողովուրդը ուժ ստանան Քրիստոսի հարությամբ:

Եղբայրական սիրով և շնորհավորանքներով, Ձեզ սիրող եղբայրն ի Քրիստոս,

ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻ

Արքեպիսկոպոս Քենտրբերիի,

ԼՈՆԴՈՆ **Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ համայն Անգլիայի**

*

Ջերմապես հղում ենք Ձերդ Սրբության մեր եղբայրական շնորհավորանքները մեր Տիրոջ Հարության տոնի առթիվ և մեր հոգին սուրբ ուրախությամբ լի, սրտեռանդն ավետում ենք.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏ **Պատրիարք Ռումինիայի**

*

Ողջագուրում եմ Ձեզ մեծ սիրով և ամբողջ սրտով շնորհավորում եմ գոչելով.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Հարություն առնելով մեռյալներից, մեր Փրկիչը Իր վրա վերցրեց աշխարհի մեղքերը, մեզ արդարացրեց, հաշտեցրեց մեզ Աստուծո հետ և վերացրեց բաժանումը մարդկանց միջև:

Ջերմեռանդ կերպով աղոթենք առ հարուցյալ Քրիստոս՝ լուսավորելու ճշմարտությամբ բոլորին, որպեսզի հաճությունն ու խաղաղությունը տիրեն համայն աշխարհում, ի փառս Աստուծո և հուրախություն մարդկանց:

Հայցելով Աստուծուց Ձերդ Սրբության համար ուժ և առողջություն, մնում ենք կարոտ Ձեր աղոթքներին և միշտ հավատարիմ Ձեզ,

ԿԻՐԻԼ

ՍՈՖԻԱ **Պատրիարք Բուլղարիայի**

*

Քրիստոսի հարության լուսապայծառ տոնի առթիվ, խնդությամբ լեցուն սրտով դիմում ենք Ձերդ Սրբության, շնորհավորելու և գոչելու.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Թո՛ղ հարության ուրախ ավետիսը համակի ու լիացնի Հայաստանյայց քույր Եկեղեցու հոգևոր դասի և համայն հավատացյալների սրտերը ու զորացնի մեր բոլորի հավատն ու նվիրումը հարուցյալ Քրիստոսի հանդեպ:

Թույլ տվեք եղբայրական սիրով համբուրել Ձերդ Սրբության:

Հանձնելով մեր անձը Ձեր սուրբ աղոթքներին, մնում ենք միշտ Ձեզ եղբայր ի Քրիստոս և պաշտոնակից,

ՀԵՐՄԱՆ

ԲԵԼԳՐԱԴ **Պատրիարք համայն Սերբիայի**

*

Սրտագին շնորհավորում եմ Ձեզ Քրիստոսի հարության պայծառ տոնի առթիվ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Մահվան դեմ Հիսուսի տարած փառապանծ հաղթանակը ոչ միայն հավերժական կյանքի գրավականն է, այլև սրբազան պարտականություն մեզ համար՝ քարոզելու և տարածելու Նրա պատգամները երկրի վրա, մարդկանց միջև սեր և խաղաղություն ներմանելու համար:

Աղոթում եմ առ հարուցյալ Քրիստոս՝ շնորհելու Ձեզ առողջություն և հոգեկան ուժ՝ շարունակելու Ձեր պատասխանատու պաշտոնը:

«Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Քրիստոսապանդ սիրով Ձերդ Սրբության նվիրյալ,

ԴՈԿՏ. ՄԻՐՈՍԼԱՎ ՆՈՎԱԿ

ՊՐԱԳԱ **Պատրիարք Չեխոսլովակյան Եկեղեցու**

*

Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ շնորհավորում և ողջունում ենք ի Տեր Ձերդ Ս. Օծությանը և մաղթում ենք Ձեզ, Ձեր հոգևորականության և քրիստոսասեր ժողովրդին՝ հարուցյալ Տիրոջ օրհնությունը, որպեսզի միակամ և միաբերան փառաբանենք զԱստված՝ մեր Հիսուս Քրիստոսի Հորը:

ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ

ԱԹԵՆՔ **Արքեպիսկոպոս Աթենքի և համայն Հելլադայի**

*

Սրտի մեծ ուրախությամբ է, որ զատկական տոներու առթիվ, կուգանք հայտնելու Ձեզի եղբայրական մեր շնորհավորությունները և անկեղծ մաղթանքները:

Քրիստոնեական սիրո մեջ միացած՝ միասին պիտի երգենք՝ **«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»**, մաղթելով, որ մեր աստվածային Փրկչի օրհնյալ և փառավորյալ հարությունը օգնե Ձեզի և մեզի սատարելու մեր սիրելի հայրենիքին և պատվական ժողովուրդին հոգևոր և իմացական վերելքին:

Շնորհակալությամբ լի սրտով կհիշենք միշտ Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի մեր այցելությունը և մխիթարական օրերը, զորս Ձեր մոտ անցուցինք:

Հաճեցեք, Վեհափառ Տեր, ընդունիլ եղբայրական ջերմ սիրո մեր ողջույնները և հարգանքի ու մեծարանքի հավաստիքը, որով մնամք Ձերդ Վեհափառ Տերության աղոթակից,

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԶ ՊԱԹԱՆՅԱՆ

ԲԵՅՐՈՒԹ **Պատրիարք կաթողիկե հայոց**

*

Երջանիկ եղբայրական հարգանքով, արտահայտում ենք մեր ջերմեռանդ աղոթքները և սիրո զգացումները և խաղաղության մաղթանքները և աստվածային շնորհները հարուցյալ մեր Փրկչին՝ Ձերդ Սրբության և մեր շատ սիրելի ժողովրդին:

ՎԱՏԻԿԱՆ ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՋԱՆՅԱՆ

*

Երկնքի և երկրի Արարիչը, մեր փրկության համար մարդացած և խաչված Փրկիչը, երրորդ օրը հարություն առնելով, սկիզբը դրեց բոլոր մարդկանց հարության:

Փրկչի հարությամբ վերջ տրվեց դժոխքի թագավորությանը, մահը մահացավ և մարդկությունը կոչվեց հավիտենական կյանքի:

«Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքին կենդանացցին» (Ա Կորնթ. ԺԵ 22):

Երկինք և երկիր ուրախության մեջ են, հրեշտակները և մարդիկ ողջունում են Տիրոջ հրաշափառ հարությունը:

Մենք ևս նույնպիսի ուրախությամբ և տոնականորեն տրամադրված մտածումներով ողջունում ենք Ձերդ սիրելցյալ Սրբությանը և ավետում.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ամբողջ սրտով աղոթում ենք Ձեր քաջառողջության համար, որպեսզի բարձրյալն Աստված հոգեպես և մարմնապես զորացնի Ձեզ Հայաստանյայց Ս. Եկեղեցու առաքելության և պայծառության նվիրված Ձեր աստվածահաճո աշխատանքներում:

Մնամ միշտ Ձերդ Սրբության եղբայր ի Քրիստու,

ՄԱԿԱՐԻՈՍ
Արքեպիսկոպոս Կիպրոսի

ՆԻԿՈՋԻԱ

*

Թող Զատկի տոնի ուրախությունը լինի Ձեր և Ձեր բոլոր հավատացյալ ժողովրդի հետ:

ՎԻՍՍԵՐ 'Դ ՀՈՒՖՏ
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար

ԺԸՆԵՎ

*

Երբ այս տարի ամբողջ քրիստոնյա աշխարհը՝ Արևելքը և Արևմուտքը միասին տոնում են մեր հաղթական Տիրոջ հրաշափառ Հարության տոնը, այս ուրախ առիթով շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը, հանուն Եպիսկոպոսական Եկեղեցու:

Զատիկը մեզ համար նշանակում է, որ մենք ազատվել ենք մեր վաղեմի թշնամուց:

Քրիստոսի Հարության տոնը նույնպես մեր հաղթանակն է: Այս օրերին, երբ չար մարդիկ հանդգնում են տապալել Աստուծո թագավորությունը, քրիստոնյա ժողովուրդը իր Տիրոջ հարությամբ ցույց է տալիս իր միասնությունը: Մինչ քրիստոնեությունը միասնաբար տոնում է Հարության տոնը, մենք հրավիրում ենք Ձերդ Սրբությանը միանալու մեր աղոթքներին, որպեսզի հարուցյալ Փրկչի խաղաղ իշխանությունը թագավորի ամբողջ աշխարհում:

Ձերդ Սրբության առողջության և Ձեր Եկեղեցու ու Ձեր ժողովրդի բարգավաճության լավագույն ցանկություններով աղոթող,

ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ
Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոս

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

*

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Խնդրում եմ Ձերդ Սրբության ընդունել իմ ջերմագին ողջույնները Քրիստոսի հարության լուսապայծառ տոնի առթիվ:

Քրիստոսի հաղթանակը մահվան հանդեպ՝ հավերժական լույսի հաղթանակն է խավարի դեմ: Հավերժական կյանքի նկատմամբ բոլոր քրիստոնյաների ունեցած հույսն է այն:

Աղոթագին մաղթում եմ Ձերդ Սրբության, Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր սպասավորներին և հավատացյալներին՝ աստվածային ողորմություն և հոգեկան ուրախություն:

Խաղաղություն Ձեզ բոլորիդ:

Եղբայրական սիրով ի Քրիստոս և խորին հարգանք,

ԴՈԿՏ. ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

Լատվիայի Ավետարանական-Լութերական
ՌԻԳԱ **Եկեղեցու արքեպիսկոպոս**

*

Նորից Զատիկ է և այդ առթիվ ողջունում եմ Ձերդ Սրբությանը՝ համայն քրիստոնյաների սրտին հարազատ ողջույնով.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Խնդրում եմ Ձերդ Սրբության՝ ընդունել իմ անկեղծ և լավագույն բարեմաղթությունները մեր Փրկչի հարության շնորհների ներքո, որը մեր սրտերի ու հոգիների մեջ հաստատեց երկնային թագավորության և հավերժական կյանքի պայծառ հույսը և անխախտ հավատը:

Խորին հարգանք, անկեղծորեն Ձերդ,

ՅԱՆ ԿԻՅՎԻՏ

Էստոնիայի Ավետարանական-Լութերական
ՏԱԼԼԻՆ **Եկեղեցու Արքեպիսկոպոս**

*

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

«Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Ձեր եղբայրական և առաքելատիպ Ս. Հարության ողջույններն ու մաղթանքները այսօր երախտագիտությամբ ստացա:

Մտքիս մեջ տակավին թարմ են Երևան և Էջմիածին այցելությանս հիշատակները: Մեծապես շնորհակալ եմ, որ Ձեր եղբայրական հրավերը այդ անզուգական առիթը հայթայթեց: Ներկայի մասին ուրախ տպավորություններով վերադարձած եմ, իսկ ապագան ավելի հուսալից գտած եմ, շնորհիվ Ձեր աստվածանվեր տեսիլքին և զոհողության: Էջմիածինը ծաղկյալ տեսնել մեր բոլորին ուրախություն կպատճառե և հպարտություն: Վստահ եմ, թե Ձեր գահակալության երկրորդ տասնամյան պիտի արձանագրե աննախընթաց հաջողություններ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո բարօրության և Մայր Հայրենիքի բարգավաճման համար:

Հիսուս Քրիստոսի Հարության սուրբ տոնին առթիվ կմաղթենք հարության զորությունը Ձեր քրիստոսանվեր առաքելության մեջ: Այն կենդանի հույսը, որ մեզի տրված է Հիսուս Քրիստուի մեռելներեն հարություն առնելովը, մեզ զորացնե, որպեսզի Աստուծո կամքը կատարվի երկրի վրա, ինչպես երկնքի մեջ:

Ընդունեցեք, Վեհափառ Տեր, Հայ Ավետարանական Եկեղեցվո Ս. Հարության մաղթանքները, ինչպես նաև մեր եղբայրական սերն ու հարգանքները:

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ Փ. ԱՀԱՐՈՆՅԱՆ

Նախագահ Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական
ՐՈՆՅՐՈՒԹ **եկեղեցիների միության**

*

Հարության այս սուրբ տոնին մեր սրտերը միանում են Փրկիչ Հիսուս Քրիստոսի հավատով: Մենք ուրախանում ենք Ձեր ժողովրդի հետ միասին այս տոնի օրը, որը լույս է սփռում բոլոր աշխարհի վրա և աղոթում, որ հարուցյալ Տերը լինի և՛ ձեր և՛ մեր հավատացյալների մեջ, քանի որ Դուք նույն-

պես համախմբված եք ամբողջ աշխարհի հավատացյալների հետ, որոնք երկրպագում են նրան:

Ի Քրիստոս հավատարիմ Ձերդ,

ՌՈՒԲԵՆ Հ. ՄՅՈՒԼԼԵՐ
ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

*

Ձատկի նախօրյակին, հողում եմ Ձերդ Սրբության իմ ամենաջերմ մաղթանքները: Աղոթում եմ հարուցյալ Փրկչին՝ Ձերդ Սրբության պարգևելու բազում ուրախություններ և քրիստոնյա Հայաստանին ու նրա բոլոր զավակներին՝ Իր օհնությունները:

Ես անմոռանալի հիշատակներ եմ պահում Էջմիածնի սուրբ հողի վրա իմ անցկացրած օրերի առթիվ: Դարձյալ հույս ունեմ այցելել Էջմիածին, Ձերդ Սրբության նվիրելու համար իմ առաջիկա գիրքը, որի բովանդակությունն է այդ սուրբ ուղևորությունը:

Բարեհաճեցեք հաղորդել իմ երախտագիտությունը Ձեր հարգամեծար Մորը, եպիսկոպոսներին, քահանա հայրերին և վանքի պաշտոնեության:

Համբուրում եմ Ձեր հայրապետական մատանին, շնորհակալ եմ Ձերդ Սրբությանը այն պատկերազարդ գրքի համար, որը բարեհաճել էիք ինձ ուղարկել, և մնում եմ Ձեր հավատարիմ և սիրող ծառան ի Քրիստոս:

Սրբազան Պապը սիրով և հաճությամբ լսեց իմ նկատմամբ Ձեր ցույց տված ուշադրության մասին:

ՇԱՌԼ ՌՅՈՒՊ
Եպիսկոպոս Մոնակոյի

ՄՈՆԱԿՈ

*

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ,
ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհավորում ենք Ձեզ, Հայ հավատացյալ եղբայրներ, Ս. Ձատկվա տոների առթիվ: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և հաջողություն խաղաղության պայքարի գործում:

Շեյխուլիսլամ՝ ՀԱՔԻՄԶԱԴԵ
Մուֆտի՝ ՎԱԼԻԶԱԴԵ

ԲԱՔՈՒ

*

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **ՇԵՅԽՈՒԼԻՍԼԱՄ ՀԱՔԻՄԶԱԴԵԻՆ,**
ՄՈՒՖՏԻ ՎԱԼԻԶԱԴԵԻՆ

ԲԱՔՈՒ

Անկեղծորեն շնորհակալ ենք զատկական շնորհավորագրի համար:

Ցանկանում ենք անձամբ Ձեզ և Ձեր ամբողջ հոտին աստվածային շնորհներ և քաջառողջություն, ինչպես նաև հաջողություն Ձեր աստվածահաճո գործունեության մեջ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ